

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ծր.

Վեցամսեայ 6 ծր.

ԱՐՏԱՍՈՒՄՆԵՐ

Երկու թիւ մէկ ծրարով

շաբեկան 14 ծր.

Վեցամսեայ 7 ծր.

ՍՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոլար

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԵՐԿ



ԼՐԱԳԻՐ

ԱՋԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rédaction du Journal

«Iraivounk»

VARNA (Bulgarie)

Редация

на ВѢСТНИКЪ


«Иравункъ»

ВАРНА

Գրութիւնք եւ չեմ տրոշիր

Իմ ունեւան տոյր
20 ամսիմ

ՀԱՅ ՊՈՒԼԿԱՐ
ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆԸ



Մէկ քանի պուլկար թերթեր վերջերս սկսած են Պուլկարա-
բնակ Հայերը կծու յօգուածներ
հրատարակել: Այդ յօգուածները
եթէ բարեկամական խրատներ
տուող և անկեղծ ոգով գրուած
ըլլային ու անոնց տակը անխոս-
տովանելի մտքեր սքողուած չը
լինէին, Հայերս ամենայն սիրով
ու շնորհակալութեամբ պիտի
ունկնդրէինք: Բայց թիւս «ազ-
գասիրութեամբ» մը երկրին մէջ
ապրող տարբեր քրիստոնեայ ցե-
ղերու ձուլումը փութացնելու և
անոնց ներքին ինքնավարու-
թեան իրաւունքները կապտելու
յետին մաքերով գրուած յօ-
ուածներ բոլոր յիշմիտ ըն-
թերցողներուն զգուշաց պատ-
ճառելէ զատ, ոչ-պուլկար ցեղե-
րու գէպի պուլկար ազգը տա-
ծած սէրը ու համակրանքը նուա-
զեցնելու կը ծառայեն:

Բայց մենք պէտք է գիտնանք
թէ այդ տեսակ նեղ հայեացք-
ներ ունեցող կամ տգիտութիւն-
ներ ու մոլեռանդութիւններ շա-
հագործել ուզող թերթեր իրենց
համար մեծ յաջողութիւն կը
հայարեն երբ մաս մը ոչխարա-
միտներու կողմէ հաւանութեան
նշաններ տեսնեն. անոնք այդ
եղանակով հետզհետէ կը քաշեն
իրենց ետեւէն ամբողջ մը գոե-
հիկներու: Ահա այսպէսով կսկսին
ցեղային ատելութիւնը, չար-նա-
խանաւորութիւնը:

Իշխող ազգերու անազնիւ մա-
մուլին կատարած այդ վատ դե-
րը ոչ թէ միայն հակակշռող այլ
նաև գերազանցող ուժեր գտնուե-
լու են, որպէս զի չարիքին առ-
ջևը անյապաղ առնուի: Արդ, կը
հարցնենք, քանի մը պուլկար
թերթերու հայոց հանդէպ սկսած
տգեղ վերաբերումը հակակշռել
մասնազներ կա՞ն, և ո՞րոնք են:

Մենք կը հաւատանք թէ պուլ-
կար թերթերու մէջ հայերս կը
ծող այդ յօգուածները կարգա-
յող և իմացող ազգայիններէ շա-

տեր անմիջապէս պատասխանելու
բաղձանք ունեցան, բայց բան
մը իրենց թեւերը կաշկանդեց-
այդ արգելիչ բանը պուլկարներէն
գրելու անկարող գտնուելին է:
Իսկ պուլկարներէն գրելու կա-
րողները, կիսմազ աւարտողները
ո՞ր են, ի՞նչու կը լռեն, ի՞նչ-
չու չեն փութար պատշաճ եղա-
նակաւ պատասխանել այդ լրագ-
րական անտեղի յարձակումներուն
ի՞նչու չեն ուղղեր պուլկար հա-
տարակութեան առջև այդ մէկ
քանի թերթերու գիտակցօրէն
կամ տգետօրէն գործած սխալ-
ները: Արդեօք փաստեր կը պակ-
սին իրենց, հայերու գէպի պուլ-
կարները սկզբէն իվեր ունեցած
գնահատելի բարեացակամութիւ-
նը, բարեկամութիւնը և բարիք-
ները թուելու համար, բարիք-
ներ որոնք անծանօթ մնացած
են պուլկար հատարակութեան:

Կայարանապետ Յովհաննէս
Սուաճեանի մահուան առիթով
միայն երէկ պուլկար հատարա-
կութիւնը իմացաւ, թէ այդ մէկ
հայը 500 պուլկարներ ազատած
էր թրքական կոտորածէ: Այդ
հայը և դեռ շատ հայեր ի՞նչ
բարիքներ չեն բրած Վերստի-
եայ պուլկար եղբայրներուն:
Արեօք, Փոքր-Ասիայ խորէն իր
կեանքը վտանգի տակ գնելով
երէկ Վերսիքան ապատող ալ հայ
է: Տիրաւորակերու և ուրիշ հայ-
կական գաւառներ աքսորուող
հարիւրաւոր պուլկարներուն վը-
կայութիւնները կը բաւեն հա-
տատիլու: Թէ հայը ո՞ր ատիճան
վեհանձն գտնուած է իրենց հան-
դէպի և հետեւաբար այսօր մեծ
վիշտ մը կզգայ, երբ կը տեսնէ
թէ կարգ մը պուլկարներ հայու-
թեան սա նեղ օրերուն մէջ մեկ
կը թշնամանեն, և կը գտնուին
այնպիսի թշուառականներ ալ
որոնք հայուն այսօրուան թըշ-
ուառութիւնը շահագործել կը
ձգտին «բաղաբակրթելու» (1)
պատրուակով և երբեմն ալ դրամ
չորթելու նպատակաւ:

Այո՛, պուլկար մամուլին միջո-
ցաւ ճանչցնելու է անոնց թէ
Պուլկարիոյ մէջ չկայ ցեղ մը,

հատարակութիւն մը որ հայուն
չափ բարեկամ և հաւատարիմ
ըլլայ Պուլկարիոյ: Հասկցնելու է
գոեհիկ քննադատներուն, թէ
հայ գաղթականութիւնը այս
երկիրը հարստութիւն և ար-
հեստ բերած է և այդ շնորհիւ
կ'ապրի, ոչ թէ իրենց «ձեռքին
հացը խելով»: անոնց գլուխը
խօթելու է թէ պուլկար քաղա-
քակարթութիւնը՝ որով մեզ
կրթել (եթէ ոչ ձուլել) կուզեն
եղբր, շատ մը տեսակետներով
դեռ շատ գաճաճ կը մնայ հայ
քաղաքակրթութեան քով: Անոնք
պէտք չէ բաղդատեն իրենց մի-
այն ուսեալ դասը պուլկարահա-
յուն հետ: Եթէ պուլկարահայը
պուլկար տարրին չափ չը յա-
ռաջդիմեր հոս, ատոր գլխաւոր
պատճառը այն խտրական ոգին
է որ իրենց մէջ հետզհետէ կա-
ծի: Իսկ գալով հայ ցեղի ընդու-
նակութեան, կը բաւէ հոս յիշել
վկայութիւնը է՛ն մեծ պուլկարին
հանգուցեալ Սթանպուլիին, որ
ասկէ 15-16 տարի առաջ Ռուս-
չուք խնճոյքի մը միջոցին ըսաւ
«Եթէ հայ ցեղը ազատութիւն
ստանայ, կարող է երեք տարուան
մէջ այնչափ յառաջդիմել, որչափ
պուլկարներս 12 տարուան մէջ»:

Ուստի պուլկարահայուն քա-
ղաքակրթութեանը ու յառաջդի-
մութեանը եթէ անկեղծօրէն
բաղձացողներ կան, պէտք է ա-
նոր կրթական գործին օգնեն
նիւթապէս, ոչ թէ դժուարու-
թիւններ ստեղծեն, յենլով այն
անարգար օրէնքին վրայ որ
ժիջքովի խելապատակէն ծնած
է մեծ պուլկարէն անգործու-
թեան դատապարտած էր: Թա-
թարներու և թուրքերու վար-
ժարաններուն կառավարութիւնը
գրամական նպաստներ կուտայ
իսկ մեր առջև ահագին դժուա-
րութիւններ կը յարուցանէ, մենք
որ ամեն ցեղէ աւելի նպաստա-
ւորուելու պէտք ունինք պէսպէս
աղէտներու պատճառաւ: Ի՞նչ
արդարութիւն...:

Այս և ասոնց նման դեռ շատ
պարագաներ կան, զորս պատշաճ-
օրէն պէտք է թուել, բացառ-

րել ու ծանօթացնել պուլկար
հատարակութեան, և այս կերպով
հակադէմ ու չեղբացնել անազ-
նիւ մամուլին թոյնը որ սկսած
է հետզհետէ ծաւալ գտնել:

Եւ այս պարտքը կը ծանոտա-
նայ գլխաւորապէս մեր պուլկա-
րագէտ և կիսմազիւք երիտա-
սարդներուն վրայ:

Օ՛ն, պարոններ, քիչ մըն ալ
ձեր գործելը տեսնենք: դուք
որ մեծաւ մասամբ հայ կրթա-
կան գործին մէջ մտնելէ խոյս
կուտաք, դուք որ միայն ձեր ա-
պագան ապահովող պաշտօններու
ու դիրքերու կը ձգտիք, բարե-
հաճեցէք յիշել թէ կը պատկա-
նիք ցեղի մը որ ձեր աշակցու-
թեան պէտք ունի զինք հալա-
ծողներուն դէմ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԵՐՊԻՍ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻՍ

Պալգանեան այս երկու փոքր պե-
տութիւններուն մէջ քանի մը տարի-
ներէ ի վեր օրէ օր աճող մտեր-
մութիւնը սա վերջին օրերու մէջ փ-
քիչ կանգ առաւ: Այս նոր երեւոյթին
երկու գլխաւոր պատճառներ կը տես-
նուին:

Սերպիոյ թագաւորին Յունաց Պատ-
րիարքարանի պաշտօնեաներուն եւ
Մակեդոնիոյ վեց յոյն եպիսկոպոսնե-
րուն պատուանշաններ շնորհած ըլլա-
լը կասկածելի կընէ Սերպիոյ մտեր-
մութիւնը յայտ Պուլկարներու: Այս
վերջինները կրօն թէ Մակեդոնիոյ
մէջ Սլաւ տարրին դահիճները եղող
յոյն տեսութիւններու պատուանշաններով
վարձատրուելը սլաւացող թագաւորէ
մը՝ բնաւ չը կրնար արդարանալ: Եթէ
Մակեդոնիոյ մէջ Յոյներու հալածած
Սլաւները Բէթր թագաւորը սերպ
ընդունի, իր ազգին դահիճները վար-
ձատրած կը համարուի, իսկ եթէ հա-
լածաւորները պուլկար կ'ընդունի, եւ
այդ հալածանքը նպաստաւոր կը հա-
մարի Սերպիոյ, թէ՛ տղայական սխալ
մը կը գործէ եւ թէ ուր կը մնայ իր
բարեկամութիւնը, եղբայրակցութիւնը
Պուլկարիոյ հետ:

Ուրիշ պարագայ մըն ալ Սերպիոյ
դէմ պուլկար մամուլին նիւթ եղած է
այս օրերս: Այն է սերպ կառավարու-
թեան 300000 Ֆր. յատկացնելը փա-
խատական կամ գաղթական սերպերու
ի նպաստ: Պուլկար թերթերը կ'ըսեն

Թէ, Սերպիոյ մէջ Թիւրքիայէն փախտական Սերպեր չկան. միայն Ալ. պահպանեալ հալածուած քանի մը ընտանիք կան. ուրիշն ալ 300000 ֆր. Եւրոպայի տարածքէն ելն էր յաւելուն «մի գոհեցէ այդ գոհմարը Սերպ չէթաներ կազմելու գործածութիւնը» Եւրոպայի Կոմիտէի նախագահը անցնելով այն կողմերու պոռթկարները հալածելու սկսին:

Այս երկրորդը այնչափ տրամաբանական չէ, բայց առաջինը անհերքելի ցոյց կուտայ, թէ Սերպիոյ Պաշտօնակարի թշնամիքն հետ կը բարեկամանայ եւ հետեւապէս պատճառ կուտայ որ Պաշտօնակարի կասկածի անոր մտերմութեան անկեղծութեանը վրայ: Եւ կասկած մը արդէն նորանոր կասկածներ կ'արծնեցնէ, հետեւապէս 300000 ֆր. մը չէթաներ զրկելու հասկածն ալ բանաւոր կը դառնայ:

Այս ամենէն կը հասկցուի նաեւ թէ տարիներէ ի վեր Սերպիոյ եւ Պաշտօնակարի միջեւ քաղաքական օրոշ համաձայնութիւններ կայացած ըլլալու կարծիքը անհիմն է: Սա ցաւալի է երկու համայնքի ազգայնական մասնաւոր ստանդարտներէն, իրար կանխորոշողութեան տակ զանազան անհրաժեշտութեան տակ զանազան օրոշութիւններ, որոնց գերութեան օրոշութիւնը զուրկ կ'ընդունին իրենց ազգայնական կառավարութիւններու անհամաձայնութեան պատճառաւ:

ՊԱՍՏՈՑ ԿԵԱՆՔԷՆ

(Շարունակութիւն նախ. թիւէն վերջ)

Համարին չարաբաստիկ գահակալութեան վերջին տարիներէն առթիւ նոր յաւելումներ եղան լրատուներէ թիւին վրայ. բովանդակ տաճկու, թիւը անսիրտ լրատուներ իրաւ էին. սկսան հաւաքել Պոստի հայ երիտասարդութիւնը, իսկ այն բոլոր հայերը որոնք որոշ օր ունէին բանտարկութեան համար, իրենց կարգին գործերն ժամ առ ժամ լինեցնելու կոչխատէին ու աւարտած կամ չաւարտած կառավարողութիւն բանտ-տանջարան մինչեւ որ «ստանդարտ» չարաբաստիկ օրը անցնէ: Եւ ալ իմ կարգին առաջին անգամն է որ հրաման կ'ընդունիմ, զինուոր մը կոչեցայ հայրտութեանը մը— գահակալութեան 3 շաբաթ առաջ— ինձ ըսելու որ տունէն դուրս չելլեմ, ու յաջորդ օրը ձեռքերս եւ

տիս կապուած առաջնորդութեանը բանտ ուր շատեր կ'ապաստեն ու կ'ապաստեն գահակալութեան հանդէսին վերջնականութիւնը:

Ահա նոր աշխարհային մայրերու, թերթերու մէջ կը կարգադրէ «Վեհափառ Սուլթանը իր երջանկաբեր գահակալութեան տարեկարգին առթիւ 250 բանտարկեալներ ազատ արձակելու շնորհն քաւ, աւելն էր իրենց պատժոյն երեք չորսորդ մար կրած են»: Հայերը սակայն վախի դողի, սարսափի անհուն ազդեցութեան տակ իսկ կը ծիծաղէին. որոնք էին անոնք որոնց ազատ արձակման շնորհ կ'ըլլար: Անոնք գահակալութեան առթիւ հաւաքուածներն էին. այդ բանտարկեալներուն մէջ եւ ինքն ալ կը գտնուէին ինչպէս ըսի վերջ. Ինչ զոհով որ ըլլար որոշած էր փախչել թուրք արշակաւանէն:

Սուլթանն է որ իր սպանդանոցի քաւարանէն կը հրամայէ, անոր իրատեններն են որ կը կործանեն, կը բեկանեն, կ'աւերեն ամեն ինչ որ իր ժանգոտած քաղաքականութեան կըրնան զոհուիլ, Սուլթանի իրաւունքներն են որ կ'արտօնեն բոլոր պաշտօնեաներու գործել զեղծութիւններ, բանտարկուածներ, խաղաղութեան ամեն տեղ, ամեն անկիւն: Պոստի քաւ մըն է կաշտակարարութեանց նոյն Սուլթանի համախոհ դաժնապատիւ թիկնապահներուն եւ պաշտօնեաներուն որոնք իբր թէ արդարութեան(?) առնչութեամբ վերայ բազմած են:

Անոնք ոստիկանութեան նախարարը աւ ու ան վաճառականներուն կը հրամայէ սպառնալով տալ 107 եւ կամ 200 ոսկի, կամ որչափ որ դրամի պէտքը ունի ինք: Ինչո՞ք վաճառականները սակայն հազարաւոր թէմէնիաներով կը ստանին կը յանձնեն պահանջածը. ու մտածեցէ՞ որ այս ամեն բաները հայուն զիւրուէն կու գան եւ սա անտարբեր կը մնայ:

Պոստի վիճակին վրայ գաղափար մը աւարտ համար անա օրինակ մըն ալ: —1906 թ. հունիսի 7-ին օր մը հրաւիրուած էին երկու թիւնք եւ երբ երկուսն ժամը 4-ին տուն կու գային. հորիկ եղաւ ոստիկանատան առջեւն անցնել, յանկարծ կ'անջուեցայ ու ապտակ մէջ զարնելով ըսին «Ի՞նչ գործ ունիս ժամը 4-ին»: Բայց եւ ուրիշ էի. որովհետեւ մէկ ապտակով ազդեցայ առանց բանտ առաջնորդութեան:

Թաղապետի կողմէն արտօնուած պիտի խօսեմ Օրմանեանի եւ իր զինուորագիտութեան վրայ. ինչ որ ամեն հայ անհատի համար հետաքրքրական է: ԱՏՈՎՄ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Տիգրիսի Յովնանեան դպրոցի օրինաւոր եւ ձեռնհաս տեսուչ Տ. Լ. Սարգսեանը հակադաշնակցական ըլլալուն պատճառաւ պաշտօնանկ ընել ջանացող դաշնակցականները անյաջողութեան մատնուած ըլլալ կը թուին, քանի որ կաթողիկոսը գործը Սիւնոքին որոշման յանձնէր է, եւ Սիւնոքը ներկայ տարւոյ ուսումնական շրջանի համար Սարգսեանի տեսչութիւնը օրինաւոր ճանչցեր է: Թէեւ կըսուի թէ դիւանապետ Մէլիք-Թանգեան վարդապետ եւ նման էնթրիքաններ կը ջանան կաթողիկոսը այս խնդրոյ մէջ անգամ մըն ալ սխալեցնել, իրենց կուսակցական քմահաճոյքին գոհացում տալու համար: Լ. Սարգսեանէ վարձուած բոլոր ուսուցիչները կը պահանջեն կաթողիկոսէն կամ վարժարանի լաւ ցումը եւ կամ իրենց ամբողջ տարեկանը:

— Էջմիածնայ մայր Աթոռին խանդարեալ մատակարարութիւն կանոնաւորելու համար Վեհ. կաթողիկոսը միաբաններէն 7 եկեղեցականներէ բաղկացեալ յանցնախումբ մը կազմէր է, որ պաշտօն ունի գործերը քննելով տեղեկագիր մը մատուցանելու եւ իր թելադրութիւնները ընելու Սիւնոքեանական ընդհ. ժողովին, որմէ կախեալ պիտի ըլլայ վերջին տնօրինութիւնը:

— Շուշի—Թուրք մը զինեալ թուրքեր յարցակած են Բիւլբուլեակ գիւղի վրայ. երկու մարդ լիբաւորած եւ կահ կարասիներ ու 49 գլուխ տաւար տարած են:

— Կարսի պետական սուրհանգակը կողոպտող տաղակախումբը որ 29,000 ռուպլի տարածէ, վերացին եւ կազմուած ըլլալ կը թուի, որովհետեւ զէպքին տեղը փախաւ մը գտնուած է որուն մէջ վրացի մը անունով անձնագիր

կայ եղեր:

— Տիգրիսի Առաջնորդարանը երկու անգամ գողեր մտած են եւ կարասիներ կողոպտած. վերջին անգամ հայ ծառաները հսկելով յաջողած են գողերէ մին վերաւորել: Ինչ որ պարզած է թէ գողերը գիշեր պահը ու քաղաքապահն են:

— Ալեքսանդրօպօլէն կը հաղորդեն թէ հոկտ. 4-ին անձանթ անձեր թնդանթած ձիւղերու մը թերանոցէն 150 հրացան գողացել են:

— Նախու գաւառին մէջ երկու տարիէ ի վեր աճող թուրքերու աւազակութիւնները վերջապէս զսպելու համար, Գանցակի ընդհ. նահանգապետ, Ալֆոնսը անձամբ Նուխի գացած ըլլալով, ամենակտրուկ միջոցներու կը դիմէ: Աւազակապետներու կիները եւ ազգականները, 80 թուրք, ձերբակալած է. թուրք գիւղերը տուգանքի են թարկած ի նպաստ կողոպտուած եւ փրկանք տուած հայերու, Աւազակներէ շատեր անձնատուր կ'ըլլան:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՍԵՒՎԷՆ 12 հ.կա. 1906


Շատ յոռի կացութեան մը մէջ կը գտնուի Սեւիկի վարժարանը: Ներկայ շրջանին համար վարձուած ուսուցիչը պաշտօնին գիտակ մէկը չէ եղեր եւ զրէթէ փորձառութեան քովն անգամ անցած չէ. կըսեն բայց խորհրդաւոր հարց մը կայ որ կը ծածկէ այս բոլորը,— ա՛յն է պարտին Դ... ական ըլլալը: Տէր Վաղինակ հրաժարեալ քահանայ, չը գիտեմ ինչ հաշուով եւ ինչ դիտարկութեամբ, փէշերը ժողոված ինկեր կայարանէ կայարան հանգանակութիւն կը կատարէ ի նպաստ Սեւիկի եկեղեցւոյն ու անշտացած դպրոցին: 2ը գիտեմ, ըսի, որովհետեւ ճարտի» եկեղեցականը շատ լաւ հասկըցած է թէ տիար Յ. Պողոսեան մը երկու տարուան մէջ ինչքը դարձուց... մինչեւ որ յաջողեցաւ Սեւիկեցի-

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

25

ԱՒՍՏԱՍՍՈՒԹԵՐ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ



ՅԱՌԱՐԱՐ...

(Շար. նախորդ թիւէն)

Մեծ-հանրաժողովուրդի մեծահասակութեանց մէջ թաղուած էր, երբ մեկաւնայ երգի մը ձայնը լսեց ու մտիկ քաւ: Զայնը ներսէն կու գար... հետեւաբար հասկցաւ թէ նառնալի էր, որ թրմադուրիչ ձայնով մը հետեւեալ երգը կը մրմնջէր ինքնին.

«Ա՛խ, իմ թոշնիկ, ի՞նչու է՛ս երգեր

վանդակիդ մէջ ոսկի թելերով:

«Ի՞նչու այդպէս գլուխդ ես կախիք Համակուած մեջտ տիտէր հոգեբով: «Արդե՞ք դուն ալ, սրտիդ շատ օտարիկ:

Սերսած մ'ուրիշ լեռներէ անդին. «Արդե՞ք դուն ալ, ո՞վ իմ խեղճ թոշնիկ, կարօտ միացիր մօրդ անհուն խանդին: «Ըսէ՛, աղւոր, ինչ մի՛ ծածկեր... վանդակիդ մէջ գերի՞ ես ինչ պէս... «Ո՛հ, կը խնդրեմ, ինչու քու երգեր Բաւնիցին միշտ արեւն իմ սրտէն: «Յայտնէ՛ ինձի, կուգե՞ս վանդակիդ Դուրս բանամ ու քեզ ազատեմ: «Գուցէ կ'ընթացե՞ս կարօտ բռնակիդ Ազատ կ'երգես քու ձայնովդ վսեմ: «Ձէ՛, չ'եմ ուզեր՝ ըլլաւ մտերիմ Մի՛այն քու ցաւիդ ու քու երգերուդ: «Ձէ՛, մի՛ կարծեր թէ ես օխերիմ թշնամին եմ քու թրմադուրիչութեան: «Երբե՛ք... երբե՛ք... ո՞վ խեղճ տարագիր, Ազատութեանդ չ'եմ բռնաբարիք: «Գնա՛, թո՛ր... չուտով հեռացի՛ր,

Ահա՛ բաց են վանդակիդ դուռներ, «Երգէ՛ երգէ՛՛ գալարիդ մէջ ազատ՝ Սիրածներու ազգունքին վրայ: «Խառնէ՛ ցաւերդ յաւէ՛տ, անընդհատ, Գոնէ՛՛ Աստուած քեզի կը գթայ... «Դաշտերուն մէջ... ամենիդ արեւն կայ... Այնտե՛ղ դո՛ւնի՛ ինչպէ՛ք քովէ՛ք... «Որո՞նց չըթուէ՞ք «վրէ՛ժ» կը դուռայ

Եւ ստուրէն՝ «անէ՛ժ» բողբոջով: «Գնա՛, թոշնիկ՝ քայլ մի՛ մոռնար թէ քեզի պէս բանտարկեալ մընեմ. «Թէ հոս մուծէ՛ աշխարհքն ինձ համար, Ու ասկից ետք՝ արիւն կը թքնեմ... «Գնա՛, գնա՛... Աստուած քեզի հետ, Գուցէ գերեզմանդ՝ վանդակիդ թո՛ղ չըլլայ:

«Անցի՛ր, անցի՛ր լեռներ, սար ու գետ Չար աշքը քեզ չի՛ պիտի տեսնայ» Մեծ հանրաժողովուրդի մինչեւ որ երգը վերջացաւ. ան ատեն կամացուկ մը դուռը բացաւ Դանիէլին ու ներքնա-

սենականներէն մին մտաւ, ուր բազմոցին մէկ անկիւնը, ձեռքը ճակտին յեռած՝ կը մնար նստեցաւ:

Մէկէն իմէկ չուղեց ձայն տալ... չուղեց անոր հանգիստը վրդովել: Ահ... ցաւ դուռին քով ու խորին գորովանքով մը սկսաւ մանկամարտ աղջկան դիմադներուն վրայ արտայայտուած մեղամաղձութիւնը դիտել: Բայց իր սիրտն ալ լեցուեցաւ ու չը կրցաւ դիմանալ. հետեւաբար մօտեցաւ. նստեցաւ ու ձեռքն անոր գողալիկ ուսեւրուն վրայ դնելով, մրմնջեց.

— Մտիկ ըրի քու զգայուն երգերդ, աղջիկ՝ կա՛ Որչափ որ չը կրցի հասկնալ, բայց խնայաց սիրտս ու լեցուեցաւ հոգեւ: Ի՞նչ էր կ'երգէիր:

Նստեցաւ ոտքի ելաւ ու մեծ-հանրաժողովին ձեռքը համբուրէլէն ետքը, պատասխանեց.

— Ո՛հ, մեծ-հանրաժողով, քանարիկ մը չուրէի:

— Այ՛ո:

— Տեսայ որ այս առտու չ'էր երգեր

ներու ուսին վրայ պարտքի մը խոշոր բեռը ծանրացունելի:

Այս անձը, զոր կը ճանչէք, չամշ-նալով ձեր գործակալին երեսն ի վեր գոչեց:

— Ես տօլանտրձի եմ. . . թերթի զբամ չեմ տար:

Ահա Սլիվէնի եկեղեցւոյն ու վար-ժարանին միոթէվէլլին, որուն ձեռ-քով պիտի յուսաւորուի (կստումոյ տ ճարն ու կրթական յարկը):

Ատեն մը այն աստիճան թաղեցուց ուղն ու ծածը քամել սկսած էր. որ ծեծով ու բռնութեամբ դուրս նետուած է եկեղեցւոյ չորհանափակէն: Բայց Սլիվէնցին ապուշ անյիշարութիւն մը ունի. տարին ետքը նորէն այդ մարդու կը գործի գլուխ կանցունէ որ ու զան ընէ...:

Ինչ որ է, մեղք իրենց. . . միայն թէ՛ կը ցաւիմ որ երկու սքանչելի ջաղացքներ ու արժէքաւոր խանութ-ներ ունեցող Սլիվէնը մուրացկանութեան տոպրակին կը դիմէ. եւ այդ տոպրակն ալ խեղճ տէր վաղինակին ճիւղը կը կախէ...:

Կարծիք՝ քիչ օրէն տէր հայրը հոտ ալ պիտի դայ՝ տոպրակը լեցնելու...:

ՎԱՐԴՈՅԻՆ ԾԵՆՈՒԻԼԸ
ՖԻԼԻՊԷԻ ՄԷՋ

ԱՆՊԱՐԱՆԻԿ ԹԵՐԹԻ պատ-մածը

— Շաբաթ օր, Հոկտեմբեր 14 կէս օրէ առաջ ժամը 11 1/2ին ասեմները, երբ արդէն Ռազմիկը լոյս տեսած էր, իմացանք որ Դաշնակցական իրկու-ե-րեք երիտասարդներ ծեծած են Շաբ-ժուր խմբագիր վարդոն՝ քաղաքիս առաջնակարգ հր. պարակին վրայ, փոս-տատան դիմաց: Յիշեալը՝ գլուխը քանի մը տեղերէ ծանրապէս վիրաւորած ու արիւնլուտա՛յ ինկած տեղէն հաղիւ ել-լելով կը փորձէ ապաստանիլ մտաւայ վաճառատուն մը. այս անգամ երիտա-սարդները հոն ժանկելով կը շարունակեն ծեծը, մինչ պաշտօնականներ սահմակած անկիւնները կը քաշո ին, իսկ անոնցմէ մէկը, Հայաստանցի մը, առաջ գալով կը միթէ ապաստանարան տալ ծեծ-ուողին: Երիտասարդները առհերով ծեծ-ուողին գէնքը՝ փողոց կը նետեն ա-ռանց թոյլ տալու. որ պատեանէն մեր-կացուի ան:

... ես ալ ազատ արձակեցի զինքը, գիտնալով որ բանտարկեալ մընէ ան ինծի պէս:

— Ո՛չ, գուն բանտարկեալ մը չ'ես: Ամեն բան պատրաստուած պիտի ըլլայ քիչ օրէն...:

- Ինչպէս՞:
- Պիտի ազատուիս:
- Ե՛ս:
- Դու՛ն:
- Որո՞ւ ձեռքով:
- Իմ կամքով ու ֆաբրիկ ձեռքով:
- Ֆաբրիկ ձեռքով:
- Այո:
- Չէ՞ որ անկա միւսման մընէ:
- Միւսման մընէ... ճշմարիտէ՞ս...

Բայց հրեշտակային սիրա մ'ունի... Այսօր խօսեցայ քու թշուառութեանդ վրայ: Դիմաց ու խօստացաւ աշխատե-լու Նային՝ ք, առատուուն կին մը պի-տի բերէ, որուն միջոցաւ պիտի կրնաս մեկնիլ:

— Դէպի ու՞ր...
— Դու ազգէդ եղող մէկու մը տու-

Ամբողջ չուկան այս յանդուգն քայ-լին առջեւ վայրկեան մը շուարուով ու սարսափի կը մատնուի, ու քիչ ետքը կը սկսի հաւաքուիլ խուռն բաղմու-թիւն մը: Վերաւարը մօտակայ դիդու-րան մը տարուելով՝ վէրքերը կը կապ-ուի ու հիւանդանոց կ'առաջնորդուի:

Եւեծող երիտասարդներէն երկու հո-գի պահակապետն կը տարուին, ուր կը խօստովանին թէ՛ իրենց այդ բնթացքը արդիւնքն էր ժողովրդին ու իրենց ընկերներուն արիւնքախնդրով հաւաք-ուած 12,000 ֆրանքները յիշեալին կողմէ կողորդուած ըլլալուն համար զգացած իրենց խոր ցաւին ու զայրոյ-թին:

Ոստիկանութիւնը քանի մը ժամ ետ-քը կ'արձակէ երիտասարդները՝ օրինա-կան պարզ հարցաքննութեանէ մը անց-նելով զանոնք:

Պուլկար ակաճառան սպաննի եւ ժողովուրդէն անհատներ՝ հիւսցումով խօսած են հայերու սնուցած այս զգա-ցումներու մասին: Եւ ինչնեղով որ, նմանօրինակ պարագաներու տակ իրենք աւելի՛ խիստ կը վերաբերուէին: Իսկ հայ հասարակութեան հետաքրքիր եւ ուզաւորտ այն ստուար զանգուածը, որ ոստիկան եղած իր իրաւունքներուն ու սրբութիւններուն պատիւին հան-դէպ նախանձսիրտութիւն մը ցոյց կուտայ, լաւ տպաւորուած կ'երեւի իր ծոցէն դուրս պոռթկացող այդ ան-չահախնդիր երիտասարդներու ընթաց-րէն:

Այս տողերէն աւելի ռեզուկ-ցութեան հոտ կը բուրէ քան թէ ուղղամտութեան վարդօյին 12000 ֆր. կուսակցութեան դրա-մը չը յանձնելը զանի սպաննե-լու աստիճան ծեծելու արդարա-ցուցիչ պատճառ ցոյց կուտան: Բայց չէ՞ որ Դաշնակցութեան Պալագանեան չըջանակային ժողու-վը վարդօյին խնդիրը ընդհ. Պատգամ. ժողովին կարգադրու-թեանը ձգած էր, և դեռ այդ Պատգամ. ժողովը չէ գումարուած ալ ի՞նչ պետք կար կարգ մը միամիտներ գրգռելու և դադե-լէ ու դատապարտելէ առաջ մարդուն գլուխը ջախջախելու:

Նը: Կուգէ՞ս երթալ... կը վստահիս:

— Ինչպէս՞ չէ... բաւակ'ան է որ իմ լեզուս, իմ կրօնքս ու իմ ազգութիւնս կը գանձու այդ սեմերէն ներքո... հի. դա-կը՝ ապարանք մը կը դառնայ ինծի, մեծ-հանրմ:

— Ուրեմն... ա՛լ չի պիտի արտասո-ւես, չէ՞մի՞:

— Ո՛չ, ա՛լ չեմ լար... ա՛լ արցունք չեմ թափիր... Մահը դառն էր ինծի ու աշխարհքը՝ զարհուրելի... իսկ ասկից ետքը մահն անուշ է ինծի ու աշխարհ-քը՝ պաշտելի, որովհետեւ ուրացող մը չ'եմ ըլլար կրօնքիս ու իզգիս հանդէպ:

— Մտիկ ըլլէ՛, Նաեղա՛յր ընդհատեց մեծ-հանրմ, գորովալի ձայնով մ'որուն մէջ անկէղծ ու անուշ չեշտ մը կը թրթրար. գետցի՛ր որ բռնութեան ներքեւ մարգա ինչ վիճակներէ ալ անցնի, մեղաւոր մը չ'է: Դուն ըսածես ինծի թէ ազատ կամքով չ'ես ձառն ապստանութիւն ներս... խեղճ չ'է որ մղած է քեզ միւսման մը ըլլալու... մէկ խօսքով՝ Ազգութիւնդ ուրացած

կարելի է նա կարգարանար Պատգամ. ժողովին առջեւ:

Այս նկատումները մեզ սա կարծիքին կը տանին, թէ վար-դօյի վրայ եղած յարձակումը դրամական խնդրէն աւելի անոր լեզուն կարկելու նպատակաւ էր, որպէսզի չը խօսի դաշնակցու-թեան ներքին ցաւերու մա-սին:

ԹՈՒՈՒՑԻԿ ՄԸ ՇՈՒՄԼԱՑԻՆ

ՇՈՒՄԼԱՑԻՆԵՐ

Ձեր թաղական աղաներուն քմահա-ճոյքը այնպէս օրոշեց որ ձեր դպրոցը այս օրուընէ սկսեալ գոցուի...:

Ձեր հարիւրաւոր ուսումնասէնչ զա-ւակները, անիծելով զիրենք կրթու-թենէ զրկող մարդիկը, պիտի թափա-րին փողոցներու մէջ:

Մեր պա՛րտքն է ձեզ զգացնել թէ ժամանակ է արթնանալու, սթափելու եւ քաջատրուութիւն պահանջելու թա-ղական աղաներէն:

Միայն Շումլա՛յի՝ մէջ է որ այս-պիսի անվայել եւ խայտառակ գոր-ծեր տեղի կ'ունենան եւ միայն հո՛ս է որ ամբողջ համայնքի մը քիթին կը խնդան 2-3 մարդեր:

ԱՐԹՆՑԷ՛Ք, ՇՈՒՄԼԱՑԻՆԵՐ՝
ԱՐԹՆՑԷ՛Ք

Ուսուցչական Մարմին
Ս. Վարդանեան վարժարանի
Շումլա 18 հոկտ. 1906

ՎԱՌՁԱՑԻ ՈՐԲԱՆԱՄԸ

Անցեալ կիւրակէ Հոկտ. 15-ին հրաւիրուած Որբանաժ ընկերութեան Ընդհ. ժողովին՝ գործադիրներէն զատ՝ միայն 2-3 անդամներ ներկայ լինելուն պատճառաւ, յարմար չը գատուեցաւ ժողովն օրինաւոր՝ սեպել. ուստի որոշ-ուեցաւ յետագայ յառաջիկայ կիւրակէ 22 հոկտ. կէս օրէն վերջ ժամը 2ին, Ազգային վարժարանի մէջ կրկին Ընդհ. ժողով գումարել:

Ուստի ընկերութեանս անդամները կը հրաւիրուին ներկայ գտնուիլ. ներ-կանները մեծամասնութիւն պիտի հա-մարուին, իսկ բացակայ անդամները վերջէն բողոքելու եւ դիտողութիւն

չ'ես... ա՛ն որ քու արիւնդ մտածէ, անոր վրայ կը ծանրանայ:

— Ո՛հ, այ՛ո, ճշմարիտ է... Բայց գուցէ չ'էք գիտեր թէ որքա՛ն դառն է ինծի այս հարիւմտեցող ի՞նչ տառա-պիլ ու հանգուրթիլ... որքա՛ն քստմ-նելի բանէ ամեն ատեն ընտալարուած վիճակի մը մէջ ապրիլ... որքա՛ն հրէ-շային է այս կեանքը՝ զոր քաշկռտե-լու ստիպուած եմ: Շատոնց, մեծ-հա-նրմ, շատոնց ես վերջ տուած պիտի ըլլայի այս անարգ կեանքիս, եթէ նպատակ մը չը բռնէր յանկարծ իմ ձեռքս... Դեռացէ՛ք որ շատ յիւրին է ազատել: Ահա պատուհանը... քայլ մը դէպի հ'ն... ու կը վերջանայ տառապանքս...:

— Ո՛չ, վատութիւն է այդ կերպով մեռնիլ... անատեն յանցանաւոր՝ կըլ-լայի խղճիդ ու Աստուծոյդ առջեւը: Կեանքը միշտ գեղածիծաղ ետեւոյթ մը չ'ունի... Երբեմն ստուէր մը կը ծած-կէ զայն: Արիստիքոս պէ՛տք է ըլլալ ու

ընկու իրաւունք չը պիտի ունենան: Հակառակ պարագային եթէ ներկայ անդամներով կրկին կարելի չեղաւ ժո-ղովն օրինաւոր սեպելու, Դործ. ժո-ղովս պէտք եղած որոշումները պիտի տայ վերջնականապէս:

Մնամք յարգանք
Ի դիմաց Դործ. ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Ա. Չարպահեան Թ. Կ. Զանկուլեան
(Կնիք)
1906 հոկտ. 19
ՎԱՌՆԱ

Շ Ն Ո Ր Հ Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Լ Ն

Վասպուտական թշուառ սովեկոց օգնելու նպատակաւ յանձնախումբս ձեռնարկած էր թատերական ներկա-յացմանց օրոնք յաջորդաբար տեղի ունեցան:

Ուստի յանձնախումբս պարտ անձին համարի հրապարակաւ իր խորին շնոր-հակալութիւնը յայտնելու ներկայաց-մանց մասնակցող պատ. ազգայնոց, եւ թէ վառնայի «ՄԱՍԻՍ» թատե-րախմբին «ԱՐԱՔՍ» նուագախմբին եւ «ԱՌԹԱ» նուագախմբախմբին որոնք յանձն առին անձնորոշաբար սոյն երկու ներկայացումները տալու, որոնց հաշուեկշիռները քանի մը օրէն պիտի հրատարակուին տեղական թեր-թերու միջոցաւ:

Մնամք յարգանք
Կարգադիր յանձնախումբ
Թ. Կ. Զանկուլեան
Ա. Սարուխանեան
Ա. Մելիքեան
1906 մոկտ. 19
ՎԱՌՆԱ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսոյ աղգ. Հիւանդանոցի մատուռին և բոլոր շէնքերուն կառուցման գործերը աւարտելու վրայ ըլլալով, որոշուած է նոյ-եմբեր 12ին բացման հանդէսը կատարել:

— Կիլիկիոյ կաթողիկոսը ա-ռաջին անգամ ըլլալով եպիսկո-պոս կը ձեռնադրէ Ատանայի Առաջնորդ Տէր Մուշէղ վարդա-

համբերել... Ան որ հանգուրթել չը գիտեր, ապրիլու գիտակցութիւնը չ'ունի: Դուն յուսահատելով մի՛ մաշո-ւիր... աղօթէ՛... ու Աստուած կը լը-սէ քու ձայնդ: Ինչպէս որ վանդակիդ քանարիկը՝ լեռան ապառաճներու մէջ՝ ազատ է հիմակ, օր մընալ այս ապա-րանքէս դուրս կը նետուիս ու ազատ կըլլաս: Դու խղճդ թելադրեց քեզ թողուն մ'երջանկացնելու... իմա ալ կը թելադրէ քու երջանկութիւնդ տալու:

Նաեղա՛յր չը պատասխանեց: Այգերու արցունքը խղճեց զինքը: Մեծ-հանրմ չ'էր՝ որ իրեն հետ կը խօսէի, այլ՝ բա-րեբար հրեշտակ մը: Մէկ խօսքով՝ գթութիւնն էր այդ կինն՝ որ մարմնա-ցած էր միւսման մը կերպարան-քին տակ:

(Շարունակելի)

պետը:

— Ամերիկայի Ուստր Հոփքըն քաղաքին մէջ շինուիլ սկսած Ս. Խաչ եկեղեցիին համար 11000 տուր ծախք որոշուած է. շէնքը միայնակ կըլլայ և յոյս կայ թէ մինչև տարեգլուխ աւարտի:

— Իգմիթէն առնուած մասնաւոր թղթակցութենէ մը Լոռաւոր կը տեղեկանայ որ նախնիքաց չարթուան մէջ նոյն քաղաքի աստիկանութիւնը 60ի չափ հայեր ձերբակալած ու բանտարկած է, երեւակայական յեղափոխական ցոյցի մը կազմակերպութիւնը պատրուակ բռնելով:

— Գահիրէի հանրատուններէն միոյն մէջ Տիգրան անուն երիտասարդ մը յարձակում կը կրէ քանի մը տեղացի արաբներէ ուրոնք կողոպտել կուզեն եղբոր Երիտասարդ հայը այն աստիճան չարաչար կը ծեծուի որ երեք օրէն կը մեռնի հիւանդանոցին մէջ: Անոր եղբայրը ու ազգականները կը պահանջեն որ յանցաւորները խտու պատժուին և այս բանին համար Առաջնորդարանին միջամտութեանը դիմած են, որ պէտքի ազդեցութիւն ի գործ դնէ կառավարութեան առջև:

— Դերասան Տ. Վ. Պապանան որ քանի մը չաբաթ առաջ հոսկէ Եգիպտոս մեկնած էր, արդէն Գահիրէ հասնելով Պէնտանի խումբին կցուած է և մասնակցած ներկայացման մը. այս առթիւ Լոռաւորէի մէջ այլոց հետեւեալ տողերը կը գրէ. «մէկ բառով միայն կրնանք յայտարարել թէ Տ. Պապանան կարող և ձեռնհաս դերասան մը ըլլալով, արուեստին բոլոր նրբութիւնները իւրացուցած է»:

ՀԱՎԱՏՈՒՄ

ԹՈՒՐԿԻԱ

Էրզրումտա կէջէն մարտ այլնու տա տախի վուզու պուլմուշ օլան գարըըզըզ սէպէպի իլէ սիւր-կիւն կէօնտէրիլէն իքի տտամ է-հալինին իտտասը իւզէրինէ թէքար Էրզրումա կէլմիլէր:

— Պրուսա վէլայէթի տախիւ լինտէ էջքիյալար արթմըշ օլտըզընտան, ժանտարմա պուվէթինի թանդիմիթմէք իչիւն Պապը Ալի Մաքէթոնիատաքի պէլ-ճիգալը զապիթլէրինտէն պիրի-նի Պրուսայա կէօնտէրէճէք, Էթթէտէ էրմէնի վիլայէթլէրինտէ հայտուալըզըլըն թէսղիրի տախի էվրոքալը զապիթլէրէ իհալէ օլտնուր իսէ էհալինին ահվալի պարի պիր տէրէճէ սիւքիւնէթքէսպ իթմէ՛զմի—Իտէրիսէ տէ հիւքիւնէթի համիտիյէ օրալարը թէսքին իթմէք իսթմէ՛զ, Էրմէ-նիլէրրահաթըզ Էրիւլէ կէօրմէ-սին իչիւն:

— Բըրի պըլէօ կազէթասընըն ալտըզը մալիմաթա պինտէն, Պօրիս Սարաֆու Սէլանիք վիլայէթինէ կիրմիլ վէ Պապը Ալի անըն պաշընը կէօթիւրէնէ պէթ-իւկ պալաշիլ վատ իթմիլ:

— Պաղտատտա կէօմրիկ իչիւն Աճէմլէր ինկիլիլ զօնսօլուհանէ-սի էօնիւնտէ թօրլանտըզըլարը էսնտաթ վալի պիր պէօլիւկ աութէր Էօլլալուպ անլէրիտէ տալըտըր իսէտէ 21 քիշի ալըրճա եարէլէնմիլ օլտըզընտան՝ աճէմ էլիսի բրօթէթ իտուպ միւճրիլ-լէրին ճէզալանմասընը Պապը Ալիտէն թալէպ էլլէտի. քէզա ինկիլ էլիսի պու խուսուտա միւտախէլէ իթմիլ տիր:

— Գարատաղ սինօրը իւզէրինտէ թիւրքլէր իսթիհքեմլար եաքմազտա օլտըզըլարընտան Գարատաղ հիւքիւնէթի բրօթէթ իտէթլէր:

ՏՍԽՒԼԻԷ

Պու ալըն 25ինէ գատար Վառնատա միւլթէմէքին հէր շախս պէլէտիլէտէն իքի տէքլարացիա ալարաք եազտըրուպ թէքար կէրի կէօթիւրմէյէ մէճպուր տըր: Հէր քիմքի պու ալըն 25ինէ գատար կէօթիւրմէյ իսէ, կէլէ-ճէք սէնի իքի գալթ Էօլ բարասը էօտէյէճէք տիր:

— Ֆէլա. Բրէնսին չու սըրաք Սօպրանիէի աչմաք իչիւն Սօֆի-այա կիթմէմէսինէ սէպէպ՝ բախ թախթտա սարը խաթալըզը օլտըզընը Տէն կազէթասը եազմըշ տըր:

— Պուկարիատան հիճրէթ իտէն Բուճլարա Եունան գօնսօլուտան բարաճա եարտըմ օլընտըզը կիպի, Եունանիստանտա տախի բարասըզ արազի վէրիլմէքտէ իմիլ:

— Վառնա ալօգաթլարընտան օլուպ, Պալըզք մէպուր օլան Մ. Բասարով Սօպրանիէտէ հիւքիւ-մէթտէն իլզահաթ իսթէաի քի՝ Մաքէթոնիատա Բուճ չէթալարըն Պուկարիարա ֆէնսալըզըլարընը մէնն իթտիրմէք իչիւն հիւքիւ-մէթ նէ՝ միւրաճաթլար իթտի, քէզա Պուկարիատա Բուճլարա գարըզը վուզու պուլան ուլկուն-սըզըզըլարըն թէքարլանմաժա-սը վէ հէր սընրֆ էհալինին մալ-ճան վէ հազլարընըն մուհաֆազա-սը իչիւն նէ՝ կէօնա թէտպիրլէր էլէ ալաճաք տըր, գապթ օլրնան քիլիսէլէր իչիւն նէ՝ էֆքեար պէսլէյօր:

Հիւքիւնէթին պու պապտա վէ-րէճէկի, ճէվապ ճալիպի տըզգաթ տըր:

— Պուկարիանըն Սթանպուլ բօլիթիգա մէմուրլըզըն Մ. Նաչէ-վիլ Եէրինէ Բարիս բօլիթիգա մէմուրը Մ. Ջուլթօվիլ նասպ օլընաճաք ըմըշ, Բարիսէ տէ Գա-րա տաղ բօլիթիգա մէմուրը Մ. Թօշէֆ կէօնտէրիլէճէք աէյօրլար: — Կէլէն հաֆթա Ֆիլիպէտէն

100 խանէ Բուճ Եունանիստանա կիթմիլէր, իչպու հիճրէթին պաշըճա սէպէպի մէքթէպ նի-զամնամէսինին 10ընճը մատտէսի օլտըզընը պուկար կազէթալարը կիլլէմէք իսթէյօրլար Բուճլար պուկարիատա էվլէլէրի կիպի բահաթ գալաճազլարընա էմին օլալար Եունանիստան չէօլլէրինէ կիթմէք իսթէմէյէճէքլէր: Փա-գաթ...:

— Այտա գազասընտա պիր թիւրք պիրալէրի օլան Հիւսէյի-նի էօլտիրիւպ, կիտէր հիւքիւնէ-թէ թէսլիմ օլուր:

— Սօֆիա էսնաֆլարընտան 300 քիշի թօրլանուպ, էսնաֆ նիլզամնամէսինին գապուլ օլըն-մալասը իչիւն գարար վէրմիլ-լէր:

— Բուճ մէքթէպլէրի գալա-տըլմասը սէպէպլէ Վառնատա 200 բուճ չօնուպարը պուկար մէք-պէպլէրինէ գայտ օլընտըլար ի-սէտէ, տահա պուլնըն իքի միսլի մէքթէպլէ կէլլէյէն Բուճ չօնուգ-լարը պուլընտըզընտան, պու կիւնլէրտէ մախսուս գօմիսէրլէր կեզուպ՝ նիլզամ մուճիպինճէ էվ-լատլարընը մէքթէպլէ վէրմէյէն բէտէրլէրի ճէզայա տիւշար իտէ-ճէքլէր:

ՐՈՒՍԻԱ

Գաթէրին գանալը իւզէրինտէ կէլէն կիւն խազինէ արապասը-նը պօմպալար թէէսիլի ալթըն-տա սօյանլարըն մուհաքէմէսի իճրա օլուտու. 8 քիշի էօլիւմէ մահքիւմ օլուպ, հիւքմ իճրա օլընտըզը Բէթրապուրկտան պիլ-տիրիլիյօր:

Ջալընան ագճէ 398.772 բուպ-լիէ պալիլ օլրյօր:

— Պիր կազէթանը իչարընա նազարէն, պիւթիւն Բուսիանըն հապահանէլէրինտէ 300.000 քիշի մահպուս վար ըմըշ: հիւքիւնէթ պուլարա հէր կիւն 15.000 բուպ լի սարֆ իթմէքտէ իմիլ:

— Կէլէն սէնէ ըսեան իտէն գալազլարտան 39 քիշի մահքէ-մէ սալօնուէն կէօթիւրիլիւր ի-քէն Մարսէյէլ մարշընը սէյ-լէմիլլէր: իչճիլէր իսէ տսքէր-լէրլէ պիր էֆքեարտա օլտըզա-րընը կէօթէրմէք իչիւն իլլէրի-նի թէքք իտուպ, պիւթիւն տիւ-քեանլարը գաթաթմըշլար: 100 քիշի թութուլուպ հապս օլ-լունմուշ:

ՄԻԻԹԵՆՎՎԻԷ

Կիրիտին մէճիսի մէպուսանը աչըլտը: Մէճիս էքսէրիլէթլէ ատանըն համի տէվլէթլէրին գօն-սօլուարընա պիր թէլէքիւրնամէ կէօնտէրիլմէսինէ գարար վէրտի:

— Ճաբօնըն պալըզճը կէմիլէրի ֆուրթուլուայ թութուլուպ, 266 կէմիտէն 39ը գուրթուլմուշ վէ 822 քիշի պօլուլմուշ տըր:

— Մարոքտա չու սըրա գա-րըըզըզը բէք արթմըշ տըր: Տէվլէթլէր թապալարընըն մու-հաֆազասը իչիւն հարապ վարօր-լարը Էօլլալար:

— Նիւ-Եօրքտան իչար օլընի-յօր Բանսիլվանիա չըմէնտը-ֆէրինտէ պիր գալա զուհուր իթտի. Էալընը 30 էօյլիւ վար:

ԹԻԻՃՃԱՐԻՅԷ

ՎԱՌՆԱ, 9 Սեպտեմբեր

ՋԱՆԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ	
Վալօն	100 քիւ. 10-50/18-40
Արապա	52-58 լիպ. 7-10.40
ԱՐԲԱ	
Վալօն	100 քիւ. 10. 20/10. 40
Արապա	42-47 լիպ. 5-80/6
ԵՌԻԼԱՅ արապա	33/36 լիպ. 4 20/5.
»	100 քիւ. 11.11.25
ՋԱՎՏԱՐ արապա	52/57 լիպ. 7/7-20
ՖԱՍՈՒԼԵԱ արապա	100 քիւ. 19/26
ՌԱԲԻՑԱ	100 քիւ. — հօգ
Արապա	100 քիւ. հօգ
ՏՈՐԸ արապա	6. 6/40
ՔՈՂՁ արապա	55-60 լիպ. 11. 12.
ՄԻՍԻՐ 57-58 լիպ. առապա	6.40/7.00
»	100 քիւ. 9. 20/9. 50
Կիւնտէ վալօն	40/50 վէ 500-600
արապա կէլմէքտէ. վալօն մուլմէ-լէսի նաբօլէօն	20 ֆր. արապա մու-առլէսի նաբօլէօն 20. 20

ՊԱԳԱԼԻԹԷ

Վարնա բիսպանտա պազալիլէ մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, ալթուն ֆրանք իլէ:

ԳԱՎԷ	2.10/ 2.25
ՇԷՔԷՐ Նէմցէ	87
ՇԷՔԷՐ քէսմէլ սանտըզ	43
ԲԻՐԻՆՃ Ճէնօվա չուվալը	42.
» Ֆիլիպէ »	35/39
» Ինկիլիլ »	32
Բիզօն »	49.
ԿԱՋ Սանտըզ	10 60
ՋԷՅԹԻՆ Էաղը քիւ	85-1. 5
ԳՈՒՐՈՒ Էաղը	48
ԵՌՄԱՐԻՍ 100	առէթի 7. 00

Ա Ջ Դ

Ռուսանիոյ Ֆօքսն քաղաքին Հա-յոյ Ազգ եկեղեցւոյն համար պէտք կայ երաթիշտ տիրացուի մը որ լինի հմուտ իր արհեստին, ունենայ պիտոքալուր ձայն, վարուք ու բարուք գովիլի տա-րիքն 35-40 եւ եթէ կարելի է լինի ամուրի. — Սոյն հանգամանօք օժտ-եալ թեկնածուներն հանդերձ պահանջ չուած հանգամանաց իրականութեանց մասին որոշ տեղեկութեամբ կարող են զիմել առ

Հոգաբարձոնքին հաչոյց եկեղ. (Ռոսմանիա) Ի ՖՈԳՆԱՆ

Одговор редакторъ А. Курбетянъ
печатица Д. Тодоровъ и С-ие — Варна